

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության
Երկրորդ ծրագրում «Իմ Ռադիո» ռադիոալիքում 2023թվականի մարտի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ
գովազդի տեղադրման իրավունքը փոխանցելու մրցույթ հայտարարելու մասին

Մրցույթի կազմակերպիչ՝ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

Մրցույթի կազմակերպման վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Մանուկյան 5

Մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը և վայրը՝ Մրցույթի հայտերն ընդունվում են 2023 թվականի փետրվարի 6-ից մինչև 2023 թվականի փետրվարի 23-ը, աշխատանքային օրերին, ժամը 10:00-ից մինչև 17:00-ն, ՀՀ, ք. Երևան, Ա. Մանուկյան 5 հասցեով:

Մրցույթի ձևը՝ բաց

Մրցույթն անց է կացվում «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության Երկրորդ ծրագրում «Իմ Ռադիո» ռադիոալիքում 2023 թվականի մարտի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ գովազդի տեղադրման իրավունքը (այսուհետ՝ Իրավունք) փոխանցելու համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝ ռադիոյի ոլորտում գովազդի տեղադրման գործունեության առնվազն երկու տարվա փորձ ունեցող, 2022 թվականին 20000000 (քսան միլիոն) ՀՀ դրամը գերազանցող գովազդային գործունեության իրացման շրջանառություն ունեցող իրավաբանական անձինք, բացառությամբ այն անձանց, որոնք դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անվճարունակ կամ գտնվում են լուծարման գործընթացում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը՝

ա/մրցույթի մասնակցի կողմից Իրավունքը ձեռք բերելու համար առաջարկվող արժեքը /մեկ ամսվա համար գովազդի տեղադրման իրավունքի գինը/:

բ/մրցույթի մասնակցի տվյալները՝ այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը /հասցեն/, հեռախոսահամարը.

գ/մրցույթին մասնակցելու համար սահմանված նախավճարի վճարումը հաստատող փաստաթուղթ.

դ/տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում տվյալ անձի կողմից գովազդի բնագավառում ունեցած փորձի մասին.

ե/մրցույթի մասնակցի կողմից 2022 թվականի արդյունքներով հարկային տեսչության մարմնին ներկայացրած հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը կամ մրցույթի մասնակցի գործադիր մարմնի կողմից հաստատված ֆինանսական վիճակի և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները.

զ/հայտարարություն այն մասին, որ մրցույթի մասնակիցը անվճարունակ չէ կամ լուծարման գործընթացում չի գտնվում,

է/հայտարարություն այն մասին, որ Մրցույթի մասնակցի 2022 թվականին գովազդային գործունեության իրացման շրջանառությունը գերազանցում է 20000000 /քսան միլիոն/ ՀՀ դրամը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները ներկայացվում են հայերեն լեզվով:

Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված կամ ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մեկ կրկնօրինակից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:

Մրցույթի հայտի ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

ա/Ծանուցման մեջ նշված Մրցույթի հայտի ներկայացման վայրը /հասցեն/.

բ/Մրցույթի անվանումը.

գ/«չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը.

դ/մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցույթին մասնակցելու համար վճարման ենթակա նախավճարի չափը և վճարման կարգը՝

Մրցույթին մասնակցելու համար վճարման ենթակա նախավճարի չափը Երկրորդ ծրագրում գովազդի տեղադրման իրավունքի համար կազմում է 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար / ՀՀ դրամ, որոնք վճարվում են «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության Հայթիգնեսբանկ ՓԲԸ 1150009581381374 հաշվեհամարին:

Գնի նվազագույն սահմանը, որը կարող է առաջարկվել Մրցույթի մասնակիցների կողմից Իրավունքների փոխանցման համար՝ մեկ ամսվա համա Երկրորդ ծրագրում գովազդի տեղադրման իրավունքի դիմաց 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար / ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Մրցույթի հայտերը բացելու, մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը.

Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվում են մրցութային հանձնաժողովի նիստին՝ 2023 թվականի փետրվարի 24-ին, ժամը 11.00-ին:

Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ամփոփվում են մրցութային հանձնաժողովի նիստին՝ 2023 թվականի փետրվարի 24-ին, ժամը 15.00-ին:

Մրցույթում հաղթողին որոշելու կարգը՝ Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է Իրավունքների ձեռքբերման ամենաբարձր գինը:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն